ԱԶԳԱՅԻՆ

ԱԳՈՒԼԻՍԻ ՀԵՂԵՂԸ.

Լրագրները գուժեցին այն մեծ հարուածը, որին անցեալ Մայիսի 21-ին յետ ճաշու 5 ժամին ենթարկուեցին Ագուլիսի մեր ազգայինք։ Ագուլիսը, պատմական Գողթնեաց գաւառի բարգաւաճ աւանը, որ իւր փարթամութեամբ շատ գաւառական քաղաքների նախանձը շարժումէր, իւր եկեղեցեաց պայծառութեամբ և Հոգ. երկսեռ դպրոցների բարեկարգութեամբ օրինակելի էր, այսօր աղետալի տեսարան է ներկայացնում. 33 ից աւելի տներ կործանուել են, 41 մարդիկ զոհ են գնացել հեղեղին, իսկ հաւի ձուի խոշորութեամբ կարկտի տարափը գրեթէ ոչնչացրել է այգեստանեայքն ու արտորայքը, և շատ տներ էլ տղմով լցրել։

Յաւալի դրութիւնը ագուլեցու, ընդհանուր կարեկցութեան և մարդասիրութեան գութ է շարժում։ Երևանի Պ. Նահանգապետը ամսոյս 2-ին շտապել է Ագուլիս առտեղեաւն հասու լինել ագուլեցոյ աղէտքին և հարկաւոր հոգացողութիւնն անել։ Նորին Գերազանցութիւնը նշանաւոր նուիրաբերութիւն անելուց յետոյ, առաջարկել է հասարակութեանը մասնաժողով կազմել դրսից եկած նուէրները ընդունելու և կարօտեալներին բաժանելու, խոստացել է միջնորդել կառավարութեան՝ օգնութեան հասցնելու անհրաժեշտութեան համար։ Վնասը համարում են 500,000 աւելի որ շատ մեծ բան է 280 ծուխ ունեցող մի աւանի համար։ Հեղեղից կործանուել են 33 տուն, տղմով լցուել են 31 տուն, հեղեղին զոհ են գնացել 41 հոգի, վերաւորուած են 9 հոգի «փչացած, ամայացած են 150-ից աւելի այգիներ. ջրի հոսանքին զոհուել են հարիւրաւոր կովեր ոչխար և այլ չորքոտանիք. բոլոր աղբիւրները, որոնցով կենդանի են Ագուլեցիք և ոռոգվումեն այգիները՝ տղմով լցուել ցամաքել են. չորանումեն հեղեղից ազատուած այգիները և դաշտերը, և եթէ այդ աղբիւրները շուտով չը մաքրուին միլիոնների կը հասնի վնասը»։

Ահա թէ որպիսի բառերով է նկարագրուած Ագուլիսի աղէտը։ Դթութիւն, գթութիւն և քրիստոնէական մարդասիրութիւն.

Ամենայն ոք իւր կարողութեան չափ տալով՝ մի պատուական և արժանաւոր ժողովուրդ կաղատէ թշուառութիւնից և կործանումից։ Տուէք, և ագուլեցին կրկնապատիկը կը հատուցանէ երբ իւր թշուառութեան արտասուքը սրբուած կը լինի։

ՎԱՆԻՑ.

Խմբագրոնին Ազգայոց ամսագրոյ.

Վերաշինութեան ժամանակի մէջ ենք.

Յորմէ հետէ իւր հայրենասիրութիւնով ազգին հանրածանօթ եղող Ս. Հայրիկն Վանի առաջնորդութիւնը թողեց և քաղաքագիտական հմտութիւններով օժտեալ Դեր. Պօղոս Արբազանն առաջնորդական կնճռալիր պաշտօնը վարել սկսած է, մեր ուսումնարաններն զգալի առաջադիմութիւններ կընեն։ Ինչպէս Ս. Հայրիկի պաշտօնէութեան միջոցին, նոյնպէս այժմու աչալուրջ Առաջնորդի փութաջանութիւնով նորընտիր Գաւ. Ուս. յանձնաժողովն իւր ջանքերն առաջ կրտանէ։ Արդէն քանիմ՝ ամիսներ առաջ սոյն յանձնախումբն՝ Ընդ. ուսումնարանների համար մեր Ուսուցչական խմբին խմբագրել տուաւ ծրագիր մը, որը յատկապէս իւր գնահատութեանն արժանացաւ։ Որպէս գիտեմ, յոյս կայ թէ ի մօտոյ պիտի յանձնուին իւրաքանչիւր ուսումնարաններին մէկ մէկ հատ՝ սոյն ծրագրին տպագիր օրինակներէն։

Մեր ուսումնարաններէն մեծ մասն՝ իրենց յառաջդիմասէր ուսուցիչներին ջանադրութիւնով արդի մեթոդին հետևած լինելով՝ տրամադիր են սոյն ծրագրին համեմատ սահմանեալ արդիւնքն արտադրել։ Պ. Յովնանեանի նոր բացած Մանկավարժական դպրանոցն՝ լիայոյս կընէ զմեզ։ Սա իւր ուղղութիւնով հսկայական քայլեր կը խոստանայ, որի քաջալերութեան մասին կը յուսամք թէ պատուարժան խմբագրութիւնդ կը ջանայ ռուսիաբնակ մանկավարժ Հայ խմբագիրներին հրաւիրել, որ իրենց թերթերէն մի մի օրինակ յղեն իւր Մանկավարժանոցին։ Նոյնպէս Արարքի Նորաշէնի, Պողոսեան վարժարանի, որբանոցի և Պ. Բարազամեանի ուսումնարաններն մեծ յոյսեր կը տածեն։

Արարք եկեղեցին՝ որ իւր բազմամարդ տուներով մեր եկեղեցիներէն ամենէն հանրածանօթն է, շնորհիւ Դեր. Պօղոս Արբազա-